ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ՝ Ս.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ 8 (68 դասաժամ)						
h/h	ԹԵՄԱ ԵՆԹԱԹԵՄԱ	ԺԱՄ	ՊԱՀԱՆՋՎՈՂ ՄԱԿԱՐԴԱԿ		ՆՊԱՏԱԿԸ	ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ
			Ա	Բ		
1	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	2				
ԳԼՈՒԽ 1. ՄԱՐԴ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ						
2	ԴԱՍ 1-2. ՄԱՐԴԸ ԵՎ ՆՐԱՆ ՇՐՋԱՊԱՏՈՂ ԲՆԱԿԱՆ ՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ	4-6	Հասկանա բնության, մարդու և Հասարակության փոխկապվածություն, բացատրի դրանց փոխհարաբերությունները: Ներկայացնի մարդու գործունեության ազդեցությունը բնության վրա: Թվարկի մարդու պահանջմունքները:	Վերլուծի մարդ, բնություն և հասարակություն հասկացությունները: Ներկայացնի մարդու և հասարակության փոխներգործությունը ժամանակակից կյանքի օրինակներով: Առաջարկի բնության և հասարակության ներդաշնակության խախտումը կանխող քայլեր:	Սովորելով այս դասը՝ դուք կկարողանա վերլուծեք «մարդ», «բնություն» և «հասարակություն» հասկացություններն ու մեկնաբանել բնության, մարդու և հասարակության փոխկապվածությունը: Ինչպես նաև կկարողանաք ամբողջական պատկերացում կազմել հասարակություն-բնություն հարաբերությունների մասին՝ մտորելով այն խնդրի շուրջ, թե մարդկային հասարակությունն ինչպիսի վերաբերմունք պե տք է դրսևորի բնության հանդեպ, որպեսզի վերջինս շարունակի գոյատևել իր բազմազանության և ներդաշնակության մեջ, և որպեսզի հաջորդ սերունդները հնարավորություն ունենան ապրելու մաքուր և անվտանգ միջավայրում:	էջ 20 – ի առաջադրանքներ
3	ԴԱՍ 3. ՄԱՐԴՈՒ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐԸ	8	Տարբերի նյութական և ոչ նյութական պահանջմունքները:	Ներկայացնի նյութական և ոչ նյութական պահանջմունքների նշանակությունը իր հասարակության կյանքում:	Այս դասը սովորելու արդյունքում գաղափար կկազմեք մարդու պահանջմունքների մասին, կկարողանաք տարբերակել նյութական և ոչ նյութական պահանջմունքները և վերլուծել դրանց նշանակությունը մարդու և հասարակության կյանքում:	էջ 26 – ի առաջադրանքներ
4	ԴԱՍ 4. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ. ԽՄԲԵՐ, ՇԵՐՏԵՐ, ՀԱՄԱՅՆՔՆԵՐ	10	Գաղափար ունենա հասարակության սոցիալական կազմի մասին: Տարբերակի հասարակական մեծ և փոքր խմբերն ու շերտերը: Բացատրի համայնք հասկացությունը:	Քննարկիև վերլուծի, թե ինչ դեր ունեն և ինչպես են ազդում հասարակական մեծ և փոքր խմբերն ու շերտերը անհատների և նրանց միջև եղած հարաբերությունների վրա:	Սովորելով այս դասը՝ դուք կամբողջացնեք ձեր պատկերացումները հասարակության սոցիալական կազմի մասին, կկարողանաք տարբերակել հասարակական փո քր ու մեծ խմբերը, նկարագրել այս կամ այն հասարակությունը կազմող սոցիալական շերտերն ու խավերը: Կվերլուծեք նաև «համայնք» հասկացությունը և կմտորեք ձեր համայնքի խնդիրների մասին:	էջ 34 – ի առաջադրանքներ

5	ԴԱՍ 5. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ (ՍՈՑԻԱԼԱԿԱՆ) ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ	12	Իմանա սոցիալական հարաբերություններ և գործընթացներ, համակեցություն, համագործակցություն, հակամարտություն հասկացությունները:		Սովորելով այս դասը՝ դուք կհասկանաք հասարակական հարաբերությունների կարևորությունը մարդու կյանքում: Կտարբերակեք ընկերության տեսակները: Կմեկնաբանեք հասարակական ժամանակակից գործընթացները:	էջ 43 – ի առաջադրք. կատարում

6	ԹԵՄԱՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ	14				
7	ԴԱՍ 6. ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ, ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	16	Համակեցություն, համագործակցություն, հակամարտություն հասկացությունները պարզաբանող օրինակներ բերի:	Ներկայացնի համագործակցությունը և հակամարտությունը որպես հանրային համակեցության բաղադրիչներ:	Սովորելով այս դասը՝ դուք կսահմանեք «հակամարտու թյուն» (կոնֆլիկտ) հասկացությունը: Կիմանաք հակամարտության դրական և բացասական դրսևորումները: Կծանոթանաք կոնֆլիկտային իրավիճակներում գործելու ձևերին: Կոնկրետ օրինակների վրա կհասկանաք համագործակցության կարևորությունը:	Տեղեկություն արդի կոնֆլիկտների վերաբերյալ
8	ԴԱՍ 7. ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ	18	Իմանան բացատրի մշակույթ, ինքնություն հասկացությունները: Ներկայացնի ազգային մշակույթին իր պատկանելիությունը:	Վերլուծի և մեկնաբանի ինքնություն և մշակույթ հասկացությունների փոխկապվածությունը, այլոց մշակութային ժառանգության՝ սեփականից տարբերվելու և առանձին գոյություն ունենալու, տարբեր ազգերի մշակույթի փոխազդեցության ու համակեցության անհրաժեշտությունը: Հիմնավորի սեփական և այլ մշակույթների նմանությունների ու տարբերությունների բնականոն լինելը:	Սովորելով այս դասը՝ դուք կսահմանեք «ինքնություն» հասկացությունը: Կկարողանաք բացատրել «կարծրատիպ» հասկացությունը: Կիմանաք մշակույթների հիմնական տարբերակիչ հատկանիշների մասին:	էջ 55–ի առաջադրանքի կատարում
9	ԴԱՍ 8.ԸՆՏԱՆԻՔ ԵՎ ԱԶԳ	20	Իմանան բացատրի ընտանիք, ազգ, մշակույթ հասկացությունները:	Հիմնավորի, որ ընտանիքը հասարակության հիմքն է: Մեկնաբանի ընտանիքի և հասարակության բարեկեցության փոխկախվածությունը:	Սովորելով այս դասը՝ դուք կսահմանեք ընտանիք հասկացությունը, կտարբերակեք ընտանիքի տեսակները: Կհասկանաք ազգի ձևավորման դինամիկան, կարժևորեք ազգայինի և համամարդկայինի դերը :	Շարադրանքի ընտանիք հասկացող. շուրջ
10	ԴԱՍ 9. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	22	Կարողանա կազմել իր համայնքի սոցիալական քարտեզը:			
Գ ԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐ						
11	ԴԱՍ 10. ԳԱՂԱՓԱՐ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՄԱՍԻ Ն	24			Այս դասի արդյունքում դուք կիմանաք արժեքների էության մասին: Կհասկանաք, որ կան մեայուն, բացարձակ արժեքնե ր: Կոնրետ օրինակների վրա կքննարկեք արժեքների բախման հիմնախնդիրը և կփորձեքորոշումներ կայացնել:	

.

12	ԴԱՍ 11. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ: ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ	26	Իմանա, թե ինչ է ազատությունը: Թվարկի մարդու հիմնարար ազատությունները և իրավունքները: Ազատության դրսևորումների օրինակներ բերի:	Տարբերակի ազատության դրսևորումները և սահմանափակումները: Նկարագրի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների սահմանափակման դեպքեր և վերլուծի դրանք:	Այս դասը սովորելով՝ դուք կամբողջացնեք ազատության մասին ձեր ունեցած պատկերացումները, կկարողանաք թվարկել մարդու հիմնարար ազատություններն ու բերել ազատության դրսևորումների օրինակներ: Կմտորեք ազատության սահմանների հարցի շուրջ և կկարողանաք հիմնավորել, թե ինչու է երբեմն անհրաժեշտ լի նում սահմանափակել ազատությունը:	էջ 71 – ի առաջադրանքների կատարում
13	ԹԵՄԱՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ	28				
14	ԴԱՍ 12-13. ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ: ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔՆ ՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ	30-32	Իմանա, թե ինչ է պատասխանատվությունը և ինչու է այն անհրաժեշտ: Տարբերի պատասխանատվություն ստանձնելու առավելություններն ու դժվարությունները: Ներկայացնի իրավունքի, պատասխանատվության և հանդուրժողականության կապը:	Նկարագրի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների սահմանափակման դեպքեր և վերլուծի դրանք: Չհավորիև դրսևորի պատասխանատվության զգացում սեփական գործողությունների հանդեպ: Մեկնաբանիիր որոշումների կայացման նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի անհրաժեշտությունը: Կշռադատի պատասխանատվություն ստանձնելու դրական և թվացյալ բացասական հետևանքները:	Այս դասը սովորելով՝ նախնական պատկերացում կկազմեք «իրավունք» հասկացության մասին, կկապակցեք այն մարդու ազատության և պատասխանատվության հետ, կկարողանաք վերլուծել պատասխանատվության արժեքն ու անհրաժեշտությունը հասարակության կյանքում:	էջ 81 – ի առաջադրանքների կատարում
15	ԴԱՍ 14. ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ: ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ	34	Բացատրի արդարություն հասկացությունը: Տարբերի արդարության բարոյական և իրավական կողմերը: Ներկայացնի տարբեր բնագավառներում արդարության արտահայտման ձևերը և վերլուծի դրանք:	Հիմնավորի արդարության կարևորությունը ժողովրդավարական հասարակության մեջ: Ունենա հմտություններ կյանքի տարբեր իրավիճակներում արդարությունը պաշտպանելու և արժանապատվորեն հանդես գալու համար:	Այս դասն ուսումնասիրելով՝ դուք կամբողջացնեք արդարության մասին ձեր ունեցած պատկերացումները, կկարողանաք հիմնավորել արդարության կարևորությունը մեր հասարակությունում և տարբերակել արդարության բարոյական և իրավական կողմերը:	էջ 89 – ի առաջադրանքների կատարում
16	ԴԱՍ 15. ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՁԵՎԵՐԸ (բաշխման, ուղղման, ընթացակարգի)	36			Այս դասն ուսումնասիրլով՝ դուք կկարողանաք ներկայացնել տարբեր բնագավառներում արդարության արտահայտման ձևերը: Ինչպես նաև կկարողանաք տարբերակել բաշխման, ուղղման և ընթացակարգի արդարությունները և վերլուծել դրանցից յուրաքանչյուրի կարևորությունը ժամանակակից հասարակության կյանքում:	էջ 97 – ի առաջադրանքների կատարում
17	ԴԱՍ 16. ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ	38	Իմանա հավասարություն հասկացությունը: Ներկայացնի հավասարության դրսևորումները (սոցիալական հավասարություն, իրավահավասարություն և այլն) և իմբասվորի դրանք:	Համեմատի սոցիալական հավասարությունն ու իրավահավասարությունը, բացահայտի սոցիալական հավասարության ու իրավահավասարության դրսևորումները հասարակական կյանքի տարբեր իրավիճակներում:	Այս դասն ուսումնասիրելով՝ դուք կհասկանաք, որ մարդիկ որոշ բաներով նման են, որոշ բաներով՝ տարբեր: Կհասկանաք նմանությունների և տարբերությունների առնչությունը հավասարության խնդրի ն: Կիմանաք իրավահավասարության և սո ցիալա կան հավասարության մասին: Ձեր գիտելիքները կկիրառեք կոնկրետ իրավիճակներում:	էջ 103 – ի առաջադրանքների կատարում

.

18	ԴԱՍ 17. ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	40			Այս դասի ընթացքում դուք կքննարկեք «հանդուրժողականություն» հասկացությունը, անհանդուրժողականության դրսևորումները: Կարտահայտեք ձեր դիրքորոշումս այս կամ այն երևույթը հանդուրժելու կամ չհանդուրժելու վերաբերյալ:	
19	ԹԵՄԱՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ	42				
20	ԴԱՍ 18. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԻՐԱ ՎՈՒՆՔ, ՊԱՀԱՆՋ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ	44	Կարողանա ներկայացնել քվեարկությունը որպես իրավունք, պահանջ և պատասխանատվություն: ոլորտներում:			
	ԳԼՈՒԽ 3. ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ					
21	ԴԱՍ 19. Ի՞ՆՉ Է ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒԺ ԵՎ ԻՇ ԽԱ ՆՈՒԹՅՈՒՆ	46	Իմանա,թե ինչ է իշխանությունը, դրա անհրաժեշտությունը, և որոնք են իշխանության աղբյուրները: Իմանա և բացատրի պետական իշխանության ձևավորման սկզբունքները, իշխանության ճյուղերի (օրենսդիր, գործադիր, դատական) խնդիրները և գործառույթները: Ներկայացնի պետական իշխանության ձևավորման և գործունեության ազդեցությունը անհատի վրա: Բացատրի ժողովրդավարական իշխանություն հասկացությունը: Իմանա կոռուպցիա հասկացությունը:	Մեկնաբանի իշխանության ճյուղերի տարանջատման սկզբունքի հիմնարար նշանակությունը ժողովրդավարական հասարակությունում: Ներկայացնի առաջնորդություն և հեղինակություն հասկացությունների փոխկապվածությունը, հեղինակության անհրաժեշտությունը առաջնորդի ընտրության և առաջնորդության իրագործման համար:Վերլուծի ուժի և իշխանության, իրավունքի և պատասխանատվության փոխկապվածությունը: Կարողանա ներկայացնել և խմբային քննարկումներում պաշտպանել հանրային հետաքրքրություն ներկայացնող (համայնքային, դպրոցական և այլն) որևէ նախագիծ: Կարողանա ուսումնասիրել և գնահատել իշխանության որևէ մարմնի, հաստատության գործունեություն:	Սովորելով այս դասը՝ դուք կկարողանաք վերլուծել «ուժ» և «իշխանություն» հասկացությունները, կհամեմատեք դրանք և կպատկերացնեք ուժի և իշխանության գործադրման տարբերությունները:	էջ 118 – ի առաջադր. կատարում
22	ԴԱՍ 20. ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ: ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ	48			Այս դասի ուսումնասիրման արդյունքում ձեզ համար պարզ կլինի, թե ինչու է իշխանությունն անհրաժեշտ: Դուք կմտորեք այն խնդրի շուրջ, թե ինչ կլիներ, եթե չլիներ իշխանություն: Ինչպես նաև կկարողանաք տարբերակել իշխանության որոշ գործառույթներ:	էջ 125 – ի առաջադր. կատարում
23	ԴԱՍ 21. ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆ	50			Այս դասն ուսումնասիրելով՝ կխորացնեք իշխանության մասին ձեր ունեցած պատկերացումները՝ վերլուծելով իշխանության աղբյուրները: Դուք նաև կուսումնասիրեք «առաջնորդություն» և «հեղինակություն» հասկացությունները՝ փորձելով պարզել, թե ինչպիսի հատկանիշներ պետք է ունենան իշխանավորները:	էջ 136 աղյուսակի լրացում

.

24	ԴԱՍ 22. ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ	52-54			Այս դասի ընթացքում կուսումնասիրեք «պետություն» հասկացությունը և կանդրադառնաք պետական իշխանության գաղափարին:	Տեղեկություն. իշխանության մասին
25	ԴԱՍ 23-24. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ	56-58			Այս դասը սովորելուց հետո դուք կհասկանաք ժողովրդավարական իշխանության առանձնահատկությունները: Կհասկանաք իշխանության սահմանափակման անհրաժեշտությունը, սկզբունքները: Պատկերացում կունենաք իշխանության ճյուղերի տարանջատման, բայց նաև՝ փոխկապվածության ու փոխկախվածության մասին: Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության որոշ գլուխներ՝ կիմանաք իշխանության ճյուղերի լիազորությունների ու սահմանափակումների մասին: Ձեր տեսական գիտելիքները կկիրառեք կոնկրետ հարցերի պատասխանելու նպատակով:	էջ 148 – ի առաջադր. կատարում
26	ԴԱՍ 25-26. ԿՈՌՈՒՊՑԻԱ ԵՎ ԹՐԱՖԻՔԻՆԳ	60-62	Ներկայացնի կոռուպցիայի պատճառները և ձևերը, թրաֆիքինգ հասկացությունը: Հիմնավորի իշխանության մարմինների գործունեության թափանցիկության ապահովման և դրա նկատմամբ վերահսկողության անհրաժեշտությունը:	Հասարակական կյանքի տարբեր ոլորտներում կոռուպցիայի դեպքեր նկարագրի և հիմնավորի դրանց բացասական ազդեցությունը տվյալ ոլորտի զարգացման վրա: Վերլուծի կոռուպցիայի և թրաֆիքինգի առնչությունները հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:	Այս դասը սովորելուց հետո դուք կկարողանաք սահմանել «կոռուպցիա» և «թրաֆիքինգ» հասկացություններ: Կհասկանաք կոռուպցիայի ձևերը, պատճառները և դրա հաղթահարման ուղիները :Կոռուպցիան հասարակական կյանքը վտանգող երևույթ է՝ հանցագործություն: Թարգմանաբար այն նշանակել է բարոյական անկում: Մարդկությունը ջանքեր է թափում այդ երևույթը վերացնելու ուղղությամբ: Կոռուպցիան հասարակական իշխանության չարաշահումն է անձնական օգուտ ստանալու նպատակով, որը վնասում է անհատի, հասարակության, պետության շահերը:	էջ 154– ի առաջադր. կատարում
27	ԴԱՍ 27. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ: ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ	64				
28	Ընդհանուր կրկնություն	66				
29	ԹԵՄԱՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ	68				

.